ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 փետրվարի 2015թ. թիվ 32-Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. հունվարի 15-ի «Գյուղական բնակավայրերում գործող առողջապահական պետական փակ բաժնետիրական ընկերությունները վերակազմակերպելու մասին» թիվ 41-Ա որոշումը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.17 կետի «ա» ենթակետով՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. հունվարի 15-ի թիվ 41-Ա որոշման 1-ին կետով նշված շենքերն ու շինությունները, ինչպես նաև նվազագույն աշխատավարձի 10000-ապատիկից ավելի արժողությամբ գույքը «ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին որպես պետական սեփականություն ամրացնելու գործընթացը կազմակերպելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովին՝

20-օրյա ժամկետում իրականացնել սույն որոշման 1-ին կետում նշված գործընթացը:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հ.Պապոյանի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2015թ. փետրվարի 13
ք.Վանաձոր